

Արձանագրություն N 3

ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2018/7 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար բազկաթռուների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

27.09.2018 թ.
Ժամը 10:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ջուլիետա Բաբայանը, անդամներ՝ Սյունե Սարգսյանը, Հասմիկ Վանյանը, Գայանե Օսիպյանը և քարտուղար՝ Սպարտակ Հարությունյանը: Նիստից բացակայում էր Դավիթ Շատվերյանը:

Օրակարգ Հայտերի արդյուքների գնահատման վերաբերյալ

ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2018/7 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ջուլիետա Բաբայանը նիստը հայտարարեց բացված: Հանձնաժողովը ուսումնասիրելով «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված եզրակացությունը /կցվում են/, հանձնաժողովի անդամների կողմից իրականացվեց հայտերի գնահատում /գնահատման թերթիկները կցվում են/, որի հիման վրա հանձնաժողովը որոշեց՝

Հաշվի առնելով, որ «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված եզրակացության համաձայն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ, հրավերով սահմանված ժամկետում ներկայացրած որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին՝

«Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ին ճանաչել որպես ընտրված մասնակից:

Գնահատող հանձնաժողովը որոշեց ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2018/7 ծածկագրով գնման հրավերով սահմանված ժամկետում «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:


Գնահատող հանձնաժողովի

նախագահ



Ջուլիետա Բաբայան

անդամներ



Սյունե Սարգսյան



Հասմիկ Վանյան



Գայանե Օսիպյան

քարտուղար



Սպարտակ Հարությունյան